Աւ բարեկամ և բարերար Աբրայ
Գերյարգելի ճօրդ ողջոյն յիսուսաւանդ

1755

Ընկալայ զգիր յԱրգելութեան ձերոյ յամսեանն նոյեմբերի, սակայն մին շաբաթ մնացեալ էր ի Բոստն։ Արդ կարի շնորհակալ եմ ի ձէնջ, զի զՀայրութիւն ձերոյ անպակաս առնէ յինէն, զի ընկալայ ևս զգիրն ինասակար ի մօրէ իմմէ գրեալն։ Ուստի զպատասխան նորա եդաք յայսմ թղթի մէջն և դուք ի փառս տեառն առաքեցէք ուր գրեալ է, զի պարտ է մխիթարել զնա բանիւ, զի հրակիզեալ է տունն մեր, հետեւապէս մտածելի է զցաւս սրտի նորա։ Միւս ևս զոչ իմն միայն գրեմ առ ձեզ, այլ և գրեմ զնովիթայ[1] զիմն նօթիցիայ[2], վասն զի եկն աստ ոմն վրացի ազգ անուն Կօրկի Ծիթլի, ի հոկտեմբերի 12. որ սա իցէ Գանձապետ Շահ Դահմազի, և Իշխան ի տանն Խորասանայ Մաշադ քաղաքին, զի ունէր ընդ ինքեան վկայական գրեալ ի Կարգէն Կաբուճիցոց ի աստրաքան քաղաքէն։ Այսպէս իբրեւ ուխտաւորական անձնարարական գիր ինչ։ Եւ անտի էհաս ի Պէջ քաղաքն, և անդ էառ յիմբարաթոռէն զգիր ի վերայ մոսկոֆ թագաւորին պատճառաւ վասն բերրելոյ զապրանս և զամենայն տունն նորա, և բնակիլ աստ և անդ յերկիրս ուղղափառաց։ Եւ անտի էհաս ի Հոօմ եկն առ յիս և տեսաք զամենայն վկայականս նորա և զնամակն Իմբարաթոռին կնգեալ. աստ այս էր փափագ նորա եթէ պապն ևս տայցէ անձնարարական, զի դիւրաւ լիցի իրք նորա, և պապն պատասխանեաց ոչ կարեմ գրել նմա զի թշնամի իմ է։ Գիտելի է, այս անձն աստ պապին ծանոյց եթէ ունի մին միլիոն և կէս մոնէթա ռօմանօ և այլք. վերջապէս սա անձն ընդ իմ ունէր զհաց 34 աւուրս։ Եւ մերային հայք լցանեալ ամենայն նախանցութեամբ, զի կարի տաքածեցաւ ի Հոօմ անուն այս Կորկի Խանին. վերջապէս տէր յովսեփն դառցոյց զսա անձն և գրաւեաց իբրև առնլոյ ի պապէն զգիր վկայական, այսինքն յանձնարարական, զոչ գիտացեալ զկերպն եթէ մեք որով կերպիւ ընթացաք մինչև ընդ պապին խօսեցաք, իսկ նա յետ խնդրելոյ անձնարարականի գրեալ էր զդրամս վասն ճանապարհի. յորժամ լուաւ պապն անկաւ զամենայն իստիման[3] Կորկի Խանին և եղև խայտառաք Հոօմայեցւոց։ Ուստի յորժամ ես խոսէի ընդ քարտինալ Վիքարին, միշտ հարցանէր ինձ ի կողմանէ դրամի, պատասխանէի նմա մին ըստակ և կամ հասաւ ոչ կամի, զի ունի, իսկ նա ոչ այնպէս այլ անցոյց ի թիւս աղքատաց զնոյն անձն և այլն. այսպէս ամաչեալ ել և գնաց Կորկինն ի Օլանտայ։ Նաև կամիմ յղել 5 ոսկի մօրն իմոյ, բայց աստ ոսկին է պապական. խնդրեմ խորհուրդ ի ձէնջ եթէ զորն առնեմ, միայն ընդ ձեր կարելի է. ողջ լերուք ի տէր։

1755 *ի սեպտեմբերի* 6 [Հոռվմ] [Մեսրոպ եպս.] Քեահայ արապեան

ՃԶ.

Թուրք պատմագիր Վասրֆ էֆէնտի իր գրուածոց մէջ մասնաւոր յիշատակութեան արժանի համարած է հետագայ ահռելի հրդեհը՝ զոր այնքան խնամքով մեզ կը տեղեկագրէ Հ. Զաքարիա վարդապետ։

Ըստ Հ. Իգնատիոսի՝ սոյն հրդեհը «եղեւ ի 27 սեպտեմբերի ի 6 պահու գիշերոյն» (Գր. առ Մելգոնեան, 1755 Հոկտ. 9)։

1. Նորութիւն։
2. Լուր։
3. Stima = յարգ։